Արձանագրություն N 2
բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/321» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

30.08.2022թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Յ. Ասատրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Զոհրաբյան, Տ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Ընթացակարգի շրջանակներում 29.08.2022 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ

(Յ. Ասատրյան)

1. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/321» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է հետևյալ հարցումը.

Հարցադրում.

«Հարգելի Գործընկեր Խնդրում եմ տալ պարզաբանում նշված ծածկագրով էլ. աճուրդի առաջին լոտի՝ «թվային ռադիոգրաֆիայի եվ ֆլորոսկոպի համակարգ» բժշկական նշանակության սարքի հետևյալ տեխնիկական չափորոշիչի համար,որտեղ սահմանված է,որ՝ «Պացիենտի քաշի մաքսիմալ տարողունակությունը, ոչ պակաս, քան՝ 300կգ»: Խնդրում եմ տեղեկացնել, ի՞նչ հիմքերով է որոշվել մաքսիմալ քաշը ոչ պակաս 300կգ: Հաշվի առնելով, որ նշված բժշկական սարքավորումը արտադրողների հիմնական մասի մոտ մաքսիմալ քաշը տատանվում է 200կգ սահմաններում,ինչպես նաև այն, որ հանրապետություն տվյալ անձնական քաշով մարդկանց թիվը բավականին քիչ է, տեխնիկական տվյալ չափորոշիչը նվազեցնում է հնարավոր այլընտրանքների թիվը, թանկացնում գնման առարկան,ինչը ուղղակի ազդում է մրցույթի արդյունավետության վրա, իսկ եթե տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ խնդրում եմ ուղղել: Հարգանքներով»

Պարզաբանում.

Բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունի ցանկացած քաղաքացի, ուստի անկախ նրանից, որ նմանատիպ քաշ ունեցող անձիք քիչ են մեր հանրապետությունում, վերջիններս նույնպես պետք է հնարավորություն ունենան սպասարկվել բուժ. հաստատության կողմից: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ձևավորվել է նմանատիպ պարամետրի կարիք:

Միաժամանակ գնման առարկայի բնութագիրը սահմանելիս հաշվի է առնվել «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Յ. Ասատրյան

Անդամներ՝ ---------- Ա. Զոհրաբյան

---------- Տ. Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան